

615.3

Մ - 76

Հ Յ Ա Զ Ա Բ Ա Գ Ե Ա Մ Ա Տ Ա Տ

Ս Ա Բ Ի Վ Ա Գ Վ Ր Ա Վ Ո Ւ Թ Ա Բ

32

№ 32

ՊՐՈՖ. ՄԻՐԶԱ-ԱՎԱԳՅԱՆ Հ.

ԱՐՅԱՆ ՓՈԽՆԵՐԱՐԿՈՒՄԸ

ՊԵՏՑՐԱՑ

ՀԵՐԵՎԱՆ

1934

20 JUL 2010

15.3  
5-76

ՀՈԽՀ ԱՆՁՆԿԱԺՄԱՆ

8105 10 30

№ 32

ՍԱՑԼՈՒՆԳՐԱԿԱՐԳԻ

№ 32

ՊՐՈՅ. ՄԻՐԶԱ-ՋՎԱԶՅԱՆ Հ.

# ԱՐԵԱՆ ՓՈԽՆԵՐԱՐԿՈՒՄԸ

ԹԵՂԴՐԱ ԲԺՇՔԱԲԱԳԻՆ  
ՅԵՐԵՎԱՆ 1934 թ.



4389

37. 2013

## ԱՐՑԱՆ ՓՈԽՆԵՐԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԻՆ ՔԵԳԻՎԱՍԳԻՒՆԵՐՆ

Արլան փոխներարկման մասին հին քեգիվասցիւներն, ինչպես յերեսում ե, տեղեկություն ունելին դեռևս շատ վաղեմի ժամանակներից: Անցյալից մնացած ավանդությունները, մադալաթների (Ebers'ի և Berlin'ի) բեկորները, մլութունները, հին ժողովուրդների բանաստեղծությունները զալիս են մեզ վկայելու այդ մասին: Հրեյական հին ձեռագրերից (Ս. Գ. Մանասի), Պլինիոսի և Պյութագորասի գրվածքներից մենք ունենք տվյալներ, վոր գեռ հեթանոսուկան աշխարհը տեղակեր այդ մասին:

Պյութագորասը, Սոսկրատեսը և Եմպեդոկլեսը սովորեցնում ենին մարդկանց, վոր արյունն իր մեջ կլանք և պարունակում և յեթե եպիլեպտիկների (ընկնավոր) յերակների մեջ տոռղջ մարդկանց արյուն փոխներարկենք (Պյութագորաս), այն ժամանակ հիշվանդը կառողջանաւ:

Ովիդիոսի «Փոխակերպությունների» (Metamorphos Jb. VII) մի յերկտողից կարելի յեզրակացնել, վոր ճները լրիվ գաղափար ունեին արյան փոխներարկման մասին—

«Ասաց-թրերով կտրեք յերակները, վորպեսզի գատարկվելուց հետո նրանց լցնեմ ջանել արյունով»:

[Sringite ait gladios veterem que haurite exuorem, ut repleam vacuas juvenile sanguine venas].

Թե ինչպես եր կատարվում արյան փոխարեցումը

Պատ. խմբակիլ Բ. Ա. Դադարյան  
Սբրագրչ Հ. Սարիկյան  
Դրամի № 8441 (բ) Հրատ. № 2971 Պատվ. № 273  
Տիրաժ 1000. Հանձնված ե. արտադրության գ  
փետրվարի 1934 թ. ստորագրված ե տպելու<sup>24631-59</sup>  
25 մարտի 1934 թ.



ինչ հետևանքներ ելին ստացվում, այդ մասին հները  
վոչ մի տեղեկություն չեն տալիս:

Այսուհետեւ միջին դարերում բժիշկները խորհուրդ  
ելին տալիս զառամյալ ծերունիներին խմել պատանի  
տղաների արյուն. որինակի համար՝ 15-րդ դարում  
Մեղիչների մոտ, Ֆլորինցիայում, ապրում եր մի  
պալատական բժիշկ, վորի անունն եր Մարտիլիուս  
Ֆլիցինուս, նրա բժշկաբանում մենք կարդում ենք հե-  
տևյալը:

«Ծերունիք յիթե կամենան ջահելանալ, պարտա-  
վոր են ծծել արյունը աղաների արմունկալին յերակ-  
ներից, վորովհետեւ ջահել արյունը կարող ե անցնել  
ծերունիների լերակները և որգանները և ահազին  
ոդուա տալ նրանց: Ինչպէս յերեսում ե պատմական  
տվյալներից արդեն 15-րդ դարուց, արյան փոխնե-  
րարկումը սկսում ե աստիճանաբար զբաղեցնել բժշ-  
կական միտքը:

1492 թվականին զառամյալ իննոկենտիոս 8-րդ  
պապին, վորը գտնվում եր հօգեվարքի մեջ, մի հրեյա-  
բժիշկ փորձել ե յերեք պատանու արլուն փոխակեցնել.  
բայց չնայած այդ հետեւական» միջոցին, պապն այ-  
նուամենայիվ մեռնում ե, պատճառ գտննալով յերեք  
պատանիների մտհվան, իսկ ինքը բժիշկը լեզուա-  
տառ փախչում ե, վորպեսզի ել յերեք վոտք չկոփի  
այդ վալրերը: Առանձին թօնչկներ, անգամ չափազանց  
հռչակափոք, զգուշացնում ելին բժշկման այդ վտան-  
գավոր ձևով զբաղվելուց ե անդամ ծագրում ելին այն.  
որինակի համար՝ այն որերի (1615 թ.) հռչակավոր  
անգլիացի բժիշկ Libavius-ը, արյան փոխակեցման  
բաժականին մանրամասն նկարադրությունից հետո  
ավելացնում ե—

«Բայց վորպեսզի այն ուժեղը (արյուն տվողը)  
չթուլանա, անհրաժեշտ ե նրան տալ կազդուրիչ մի-  
ջոցներ, իսկ բժշկին համենալին զեղս հրամցնել լեզե-  
բորու»: իսկ միջին դարերում ինչպես մենք գիտենք,  
յեղերորոսը տալիս ելին խելագարներին:

Այդ դրությունը տեսք մինչև 17-րդ դարու սկըզբ-  
ները, յերբ բժշկական միտքը, ոգտվելով հանձա-  
րեղ Հարվեյի արյան շընանառության տեսությունից  
(1628 թ.) ձեռնամուխ յեղավ գիտության ավելի լայն  
հորիզոնների և հանդուզն փորձերի: Արյան փոխնե-  
րաբկումը զիտականորեն հիմնավորելու նպատակով  
մի շարք բժիշկների և վիրաբուլֆների կողմից կատար-  
վեցին բազմաթիվ փորձեր կենդանիների վրա, վորից  
հետո ստացված փորձառությունը իրավունք տվեց  
արյան փոխներարկումը կիրառելու կյանքի մեջ իբրև  
բուժման նոր ձև:

1657—1664 թվականներին հայտնի բժիշկ Klare'-ը  
կատարել ե բազմաթիվ փորձեր կենդանիների, վրա՝  
մեծ հաջողությամբ. Thamas Coxe'-ը, կասկածելով վոր  
քոս հրվանդության վարակը գտնվում ե արյան մեջ,  
փորձել ե քոսոտ շան արյունով վարակել առողջին.  
փոխներարկումից հետո քոսոտը բոլորովին առողջա-  
ցել ե, իսկ առողջ շունն ի զարմանս Coxe'-ի, վոչ մի  
տրամադրություն չի ցույց տվել վարակվելու: Մի  
ուրիշ գեպքում Griffoni'-ին առողջ շան արյունը փո-  
խալցըրել ե ծեր, խուլ և անդամալույծ շան յերակների  
մեջ և ստացել ե զարմանալի հետևանք: ծեր շունն ա-  
զատվել ե իր խորությունից, ախորժակը բացվել ե, նո-  
րից սկսել ե վազգել և թռչուալ և ճանաչել ե իր  
տիրոջ ձայնը:

1666թ. հայտնի R. Lower'-ը կատարել է բազմաթիվ փորձեր կենդանիների վրա, ներարկելով նրանց վճարին սիստեմը գարեջուր, գինի, և կաթ: Իր գիտական փորձերի ընթացքում Lower'-ը շանը բոլորովին արնաքամ եր անում, վորից հետո միացնում եր նրա պարանոցային վենան (vena jugularis) մլուս առողջ շան քններակի հետ (art. carotis):

Beyl'-ը կարծում եր, վոր արյան փոխներակմամբ կարելի լի կենդանիներին յերիտասարդացնել և մինչև անգամ կրկնակի փոխներարկումով... մի կենդանուց ստանալ մի ուրիշ տեսակի կենդանի: Փոխներարկումը կատարվում եր մետաղյա խողովակի միջնորդ, վոր միացնում եր մի կենդանու լծերակը (vena jugularis) մլուսի քններակի հետ (art. earotis):

Վերջապես 1667 թ. յերեան յեկավ մի չափազանց անգախ և տաղանդավոր բժիշկ. դա հոչակալոր Denis'-ն եր. նա իր փորձերը տարավ բալորովին այլ կերպ. համոզվելով, վոր կենդանուց կենդանուն արյան փոխներարկումն անցնում ե հաջող, նա տանց տատանվելու անցավ այդ փորձերի ամելի պատասխանատու և հանդուզն փորձերի: Նա քաջություն ունեցավ առաջին անգամ մի 16 տարեկան, համարյա արնաքամ յեղած (վարակիչ հիվանդությունից) յերիտասարդի լերակի մեջ փոխալեցնել դառնան արյուն և, ի զարմանս բոլորի, կատարյալ և փալլուն հաջողություն ունեցավ—յերիտասարդն առողջացավ: Հնում կարծում ելին, վոր արյան փոխալեցումով կարելի յե բուժել հոգեկան հիվանդությունները (Պութադորաս) և ահա Denis'-ը մի հիվանդի, վորը տառապում եր մանիակալ—դեպքեսսիվ պսիխոզով, փորձեց բժշկել հորթի ար-

յան (Յ—Շ ունց) փոխներարկումով և հաջողություն ունեցավ, կարճ ժամանակով հիվանդը կարծես թե լավացել եր, բայց քիչ անցած, հիվանդությունը ելի նորից նորոգվեց նույն ուժքնությամբ և թափով: Հիվանդի կինը, վորին նա հաճախ ծեծում եր, ստիպված ելի նորից դիմեց Denis' ի ոգնության, աղաչելով, վոր արյուն փոխներարկի: Denis'-ը համաձայնվեց, բայց այս անգամ փորձը ճակատագրական վախճան ունեցավ և հիվանդը ոպերացիայից քիչ հետո մեռավ: Հիվանդի կինը, վորը մինչ այդ մեծ յեռանդով Denis'-ից ոգնություն եր աղերսում, ամուսնու մահից հետո դատարան հրավիրեց նրան: Այդ և մի քանի նման անհաջող գեղքերից դրդված, ֆրանսիական Պարլամենտը 1670 թ., կտրականապես արգելեց այլևս արյան փոխներարկման փորձեր կատարել մարդկանց վրա: Անգամ Փարիզի բժշկական ֆակուլտետը մեղադրեց Denis'-ին, զանելով, վոր նրա փորձերը մարդկանց վրա՝ դեմ են մարդասիրության որենքներին:

Բայց Denis'-ի փորձը չմնաց անհետեանք. այլ յերկրներում՝ Անգլիայում, Խտալիայում և Գերմանիայում յերեան յեկան մի շարք բժիշկներ, վորոնք շարունակեցին Denis'-ի փորձը: Այսպես 1667 թ. Անգլիայում կինդ՝ և Լաուեր՝ ը մարդու լերակի մեջ փորձեցին փոխանցել հորթի տրյունը, բայց անհաջող, իսկ Խտալիայում Ռիվան և Մանֆրեդը 4 անգամ նույնը կատարեցին ուրիշ կենդանիների վրա: 1668թ. Կառվամանը և Պութմանը Գերմանիայի Ֆրանկֆուրտ քաղաքում նմանապես 4 անգամ արյուն փոխներարկեցին հորթերից բարոտներին, բայց այդ բորոտներից միմիաբն մեկն առողջացավ, իսկ մյուս յերեքը, բժշկ-

հերի տսելով, յերկար ժամանակ տառապում ելին  
«վոչսարի մելամաղատությամբ»:

Ժամանակի ընթացքում ընդհանուրի անտարբեր-  
ությունը և բացասական վերաբերմունքը դեպի ար-  
յան փոխներարկումը Ֆրանսիայից անցավ մյուս  
հարեւան յերկրները և ահա մենք ակտնատես ենք, վոր  
համարյա ամբողջ մի դար, այսինքն, մինչև 19-րդ  
դարու սկզբները, Յեփրոպայի և վոչ մի քաղաքում  
ժակման այդ նորագույն ձեզ ընդունելություն չունի:  
Նրան դեմ եր վոչ միայն բժիշկների հոծ բազմու-  
թյունը, այլև պետական բարձրագույն որդանների  
կողմից խստորեն և ամենուրեք արգելվում եր արյան  
փոխներարկումը: Դիոնիս'ը (18-րդ դար) զրում եր  
այդ մասին, վոր արյան փոխներարկումն արդեն մո-  
ռացված ե' իրքի մարդասիրության և կրոնի դեմ մի  
բժշկման մեթոդ: իսկ Պորտալի կարծիքով «դա մի  
բժշկական կուրիոզ եր»:

Անցավ մոտավորապես մեկ և կես դար և ահա  
հաշակավոր անատոմ Բիշա'ն 1805 թ., ապացուցեց իր  
կատարած փորձերով, վոր կանդ առած սրտի վրա  
վենային արյունը կենդանացուցիչ ազդեցություն ունի:  
Մյուս կողմից, 1824 թ., անգլիացի վիրաբույժ Բան-  
դել'ն իր մի շարք փորձերով նորից վերականգնեց  
փոխէցման շուրջը մտքերի լայն և աշխարյաց փոխա-  
նակություն: Նա ապացուցեց, վոր արյան ապա-  
հերը բոլորովին կենդանանում են արյան փոխներար-  
կումից: Իշարս բազմաթիվ չափազանց հետաքրքիր գու-  
տերի, Բանդել'ն առաջինն իր, վոր արյան փոխներար-  
կումը կատարեց զարիցի միջոցով: Շարիցի գործածումը  
չափազանց հեշտացնում եր ոպերացիայի տեխնիկան

և այդ եր պատճառը, վոր բազմաթիվ անզվիացի  
գիւնեկոլոգներ սկսեցին գործածել հետօննդրան արյու-  
նահոսությունների ժամանակ:

1923 թ. տեղի ունեցավ մի չափազանց կարևոր  
փաստ: Այն որերի բժշկականության միտքն այնքան  
եր ընտելացել արյան փոխներարկման նոր զաղափա-  
րին, վոր մինչև անգամ պաշտոնապես թուլլ տրվեց  
Միլն Եղվարդուն, իբրև զիսերտացիայի նյութ, գրել  
արյան փոխներարկման մասին. իսկ Փարիզի համալ-  
սարանում մինչև 1860-ական թվականները բժշկման  
այդ նոր ձեզ յենթարկվեց չափազանց լուրջ ուսում-  
նասիրության: Այդ նյութի շուրջը լույս տեսան 5 զիս-  
սերտացիա: Այդ հանգամանքը չափազանց ուժեղ  
զարկ տվեց հարցի լայն տեսաբանության, իսկ փորձն  
իր հերթին յեկագ նրա կիբառման ոժանդակիելու. յեկ,  
1876 թ., Որե՛ն ներկայացրեց արդեն արյան փոխ-  
ներարկման 300 գեղք, վորոնց մեծ մասն անցել ելին  
հաջող բայց վորովճեան Որե՛ի և ուրիշների փորձերը  
գիւնավորապես լաբորատորիական բնույթ ելին կրում  
և նրանց վորոշ տոկոսը մատնվում եր անհաջողու-  
թյան, այդ պատճառով իբրև բժշկման նոր ձեւ, նա  
դեռ կարոտ եր ավելի խորը պարզաբանման և ու-  
սումնասիրության: 1874 թվականի գերմանական վի-  
րաբույժների համագումարն ի վիճակի չեղավ հիմնա-  
վորելու և թուլատրելու արյան փոխներարկումը  
մարդկանց վրա, նամանավանդ, վոր մի քա չափա-  
զանց հեղինակավոր խթրուրգներ, ի շարս նոցա և  
պրոֆ. Բերգմանը, առանսարնեկ կամկածում ին, վոր  
արյան փոխներարկումն, իբրև բժշկման մեթ և, կա-  
րողանա հաջողություն ունենալ: Մարդը սիսական

ե, անդամ լեթե նա լինի չափազանց հեղինակավոր, Հալտնի գերմանացի պղոփ. Բիլլրոտը հիմարություն եր համարում վիրավորված սրտի կարը, իսկ աշխարհահռչակավակ կիրխովը ծաղրեց Զեմմելվելիսի հականնեխման թեորիայի հանճարեղ գյուտը, վորի պատճառորդ խեղճ Զեմմելվեյը, ծաղր ու ծանակ դարձած ամենքի կողմից, մեռավ ծալրաստիճան աղքատության մեջ, իլ ժամանակին Բիլլրոտի սխան ուղիղ գտավ հայտնի Ռողեն, իսկ Զեմմելվելիսի անփառունակ վախճանն ափսոսանքով հիշեցին *Lisfrēr-*ի որոք. և այժմ, ամենուրեք, աշխարհիս ամենախուլ անկյուններում անգամ հանրածանոթ ե թե վիրավոր սրտի կարը և թե հականնեխման ուսմունքը:

Նույնը տեղի ունեցավ նաև արյան փոխներարկման նկատմամբ. ընդհանուր աննպաստ կարծիքը չարգելեց Լանդուալին (1874-75 թ.) շարունակելու իր տոկուն աշխատանքներն արյան փոխներարկման թեորիայի պարզաբանման շուրջը և շուտով նրան հաջողվեց փալուն կերպով ապացուցել, վոր արյան փոխներարկման անհաջող դեպքերի գլխավոր պատճառը ոտար արյան կարմիր գնդիկների քայլքայումն ե (հեմոլիզ). Այդ պրոցեսն ըստ Լանդուալի, կատարվում եր հետևյալ կերպով, փոխներարկված արյան կարմիր գնդիկները (երիտրոցիտներ) հիվանդի արյան պլազմայի ներդործությունից սկզբում լինթարկվում են ագլուտինացիայի, այսինքն նրանք կոլչում են միմյանց, կազմելով գրամացին սլունակներ (մոնետնու շոլնիկ). այդ ոլունակները շուտով քայլքայլում են և տարրալուծվում (հեմոլիզ), կազմելով մակարդկած արյան բազմաթիվ շեղակույտեր. այդ շեղակույտերը

հիվանդի արյան գլխավոր անոթները խցանվում են, առաջ ե գալիս արյան կանգ և մահ. Ուրեմն, յեթե մի վորևե կերպով կարելի լիներ խանգարել փոխներարկված արյան երիտրոցիտների քայլքայման առաջն առնել, այդ գեպքում հարցը լուծված եր. Յեկ ահա առաջ յեկան մի շարք խիբուրգներ և գիտնականներ, վորոնք իրենց զարմանալի աշխատանքներով գիտականորեն և փաստորեն վերջնականապես հիմնավորեցին արյան փոխներարկման թեորիան. Յեկ այժմ աշխարհիս ըոլոր կուլտուրական վայրերում փոխներարկումը լայն չափերով, իրեկ բժշկման նոր մեթոդ, գործ և ածվում ի սպաս մարդկության:

Արյան փոխներարկման թեորիայի զարգացման վերջին փաղը սկսվեց 1900 թ., յերբ Շետտոկը ձեռնամուխ յեղավ հիվանդ մարդկանց արյան լուրորատոր ուսումնասիրության, նա նկատեց, վոր մարդու արյան շիճուկի ներգործությունից առաջանում և մյուսի երիտրոցիտների ագլուտինացիա. Լանդշտեններն ավելի խորացրեց այդ հետազոտությունները և ցուց տվեց, վոր յերկու ըոլորովին առողջ մարդկանց արյան շիճուկներ նմանապես կարող են առաջ բերել ագլուտինացիայի յերեւյթներ. Այդ փաստը չափազանց շփոթեց այն որերի բշկական միտքը, վորովհետեւ մինչև այն կարծում ելին, վոր ագլուտինացիան միայն յուրահատուկ է, յերբ խառնում են յերկու տարբեր տեսակի կենդանիների արյուններ, որինակի համար՝ հորթի և մարդու, մարդու և շան, մինչդեռ յերկու միատեսակ կենդանիների արյան խառնուրդից որ. յերկու մարդու, վոչ մի ագլուտինացիա չպիտի առաջանա. Բայց փաստը յեկավ հեր-

քելու այդ համոզմունքը — Երկու մարդկանց արյունների խառնութը նմանապիս առաջ ե բերում ազլուտինացիա:

Ստիպված յեղան միևնույն, բայց բոլորովին նոր պայմաններում առաջացող յերեսովիթը բնորոշել նոր տերմինով, այն է՝ իրազգայտաշինացիայով: Յեթե արյան փոխներարկումը կատարված է յերկու տարբեր տեսակի կենդանիների միջև, այդ դեպքում փոխներարկման այդ ձեւը կոչվում է հետերոլոգ, իսկ յեթե այդ կենդանիները միևնույն տեսակին են պատկանում — հոմոլոգ: Հարցի հետագա պարզաբանումը ցույց տվեց վոր ազլուտինացիայի վերաբերմամբ մարդկի բաժանվում էն չորս խմբի: Յեթե խառնենք յերկու միևնույն խմբին պատկանող մարդկանց արյունները — ազլուտինացիա չի առաջանա, այն ինչ տարբեր խմբերի պատկանող մարդկանց արյունները խառնելուց մենք շատ անդամ կոտանանք ազլուտինացիա:

Ազլուտինացիայի այդ խմբակային թեորիան սկզբ բռում առաջարկեց Յանսկին (1907 թ.). իսկ հետո, սրանից բոլորովին անկախ, Մոսուր (1910 թ.). միաժամանակ այդ յերկու գիտնականները մշակեցին յերկու տարբեր խմբերի պատկանող մարդկանց արյան փոխներարկման որենքները: Դրա համար նրանք առաջարկեցին վորոշ ազլուտակներ, վորոնք թուլլ են տալիս նախապիս վորոշելու, թե վոր խմբերին պատկանող մարդկանց միջև կարելի յե արյան փոխներարկում կատարել: Վերոհիշյալ հեղինակները ցուցաբերցին նաև մի չափաղանց լուրջ հանդամանք, այն, վոր արյան փոխներարկման ժամանակ պետք ե աչքի

առաջ ունենալ միմիայն փոխներարկած արյան երիտրոցիտների ազլուտինացիան, իսկ արյուն ստացողի երիտրոցիտների ազլուտինացիան նշանակություն չունի, վորովհետև փոխներարկած արյան շիճուկն արագորեն մարսվում է (աբսորբցիա) ստացողի արյունով և նրա ներգործությունը շուտով վերանում է:

Խմբակների փոխներարկերությունները վարչելու նորատակով Յանսկին առաջարկել է մի տղիուսակ, վորից պարզ յերեսում և խմբերի դեպի միմյանց համակրությունը և հակակրությունը: Յեթե արյունը կարելի յե փոխներարկել, այդ դեպքում աղյուսակի համապատասխան տեղը նշում են դրական նշանը հակառակ դիրքով:

### Յանսկու աղյուսակը

		Երիտրոցիտներ			
		1	2	3	4
Տեղը	1	—	+	+	+
	2	—	—	+	+
	3	—	+	—	+
	4	—	—	—	—

Յանսկի աղյուսակը կազմել ե հետեւյալ ձևով —

Առաջին խմբի (1) շիճուկի ներգործությունից բոլոր մյուս խմբերի երիտրոցիտները յենթարկվում են

ակլուտինացիալիք. Նա տեղի չի ունենում, իեթև շբառվը և երիտրոցիտները պատկանում են միենույն առաջին խմբին. Բացի ալդ, այս խմբի երիտրոցիտները մըուս լերեք խմբի շիջուկներից ազլյուտինացիալիքի չեն լենթարկվում:

Զորըորդ խմբի շիճուկն ունի բոլորովին հակառակ հատկություններ. այս խմբի շիճուկի ներգործություններից մըուս լերեք խմբերի երիտրոցիտների ազլյուտինացիա չի առաջանում, բայց այդ խմբի երիտրոցիտները մըուս լերեք խմբերի շիճուկից լենթարկվում են ազլյուտինացիայի, բացի նույն խմբի շիճուկից:

Առաջին խմբի շիճուկից առաջանում և լերկորդ և լերըորդ խմբի երիտրոցիտների ազլյուտինացիա, իսկ չորրորդ խմբի շիճուկը, ընդհակառակը, 2-րդ և 3-րդ խմբի երիտրոցիտների ազլյուտինացիա չի տալիս:

2-րդ և 3-րդ խմբերի շիճուկից առաջանում և 4-րդ խմբի երիտրոցիտների ազլյուտինացիա, բայց առաջի խմբի երիտրոցիտներնը վոչ:

2-րդ խմբի շիճուկը ազլյուտինացիալիք լենթարկում 3-րդ խմբի երիտրոցիտներին, իսկ 3-րդ խմբի շիճուկն ընդհակառակը:

Վորպեսդի ավելի պարզ լինի ալդ խմբակների փոխհարաբերություններն, արտահայտվենք այլ կերպ—

Ներկայումս ամենուրեք արյուն ստացողին անվանում են ոեցիպիենտ, իսկ արյուն զիջողին՝ դոնոր, ախնակն վոր՝ բոլոր վորոշումները, համաձայն այդ նոր կոչումների, կստանան հետևյալ ձևը—

ա- 1-ին խումբը ունիվերսալ դոնոր և, բայց հանդուրժում և միմիալին իր խումբը:

բ- 4 րդ խումբը ունիվերսալ ոեցիպիենտ և, բայց իրենից կարելի յե փոխներարկել նույն 4-րդ խմբին պատկանող մարդկանց:

գ- 2-րդ խմբից կարելի յե փոխներարկել 2 րդ և 4-րդ խմբերին, բայց ինքը կարող ե ստանալ 2-րդից և 1-ինից:

դ- 3-րդ խմբից կարելի յե փոխներարկել 3-րդ և 4-րդ խմբերին, բայց ինքը կարող ե ստանալ արյուն 3-րդից և 1-ինից:

Մոսսի ազլյուտակն այս բոլոր փոխհարաբերությունները խմբերի միջև ներկայացնում ե հակառակ ուղղությամբ, վորովնեան դա նույն Յանսկու ազլյուտակն ե, բայց գլխիվայը շուռ տված, այստեղ բերում ենք Մոսսի ազլյուտակը, վորից շատ հեշտությամբ կարելի յե պարզել, թե ինչումն ե զանազանությունը,

### Մոսսի ազլյուտակը

		Երիտրոցիտներ				
		Խումբ	1	2	3	4
Համար	1					
	2	+	—	+	—	
	3	+	+	—	—	
	4	+	+	+	—	

Փորձը ցույց ե տվել, վոր Արեմայան Յեղրոպայի բնակչութեան ամենից հաճախ պատկանում են 2-րդ խմբին, իսկ խափշիկները գլխավորապես 1-ին: Դռւուկները ե Հերշֆելդն տպացուցել են, վոր նորածիններն ունեն վորոշ խումբ, վորը սակայն կայուն ե կառնում յերկրորդ տարվա վերջերում և կարող ե մոր խմբից բոլորովին տարբեր լինել:

Ըստ Եղենի զանազան դեղերի գործածությունից (խինին, կալսիոն, անտիպուրին), ունտղենալան ճառագալթների ներգործությունից, դաշտանի ժամանակ, անհայտը վորոշ խմբի համարը կարող ե ժամանակաշորապես փոփոխել (Ճամով, Յելանսկի):

Կերոնիշյալից պարզ ե, վոր արյան փոխներարկումից առաջ անհրաժեշտ ե ամեն անգամ բոլորովին ճշգրիտ կերպով վորոշել, թե վոր խմբակին են պատկանում Դոնորն ու Ռեցիպիենտը, և յեթե նրանք, ըստ ազյուտակի, համապատասխանում են միմյանց, այն ժամանակ կարելի է փոխներարկել:

Դրա համար կան զանազան միջոցներ, բայց տեղի սղության պատճառով մենք կնշենք նրանցից միմիան յերկուսը.

1. Ռեակցիան կարելի յե վորոշել՝ ուղարկելով նախապես պատրաստված շիճուկներից, այդ շիճուկները կոչվում են «ստանդարտ» և կարելի յե ստանալ կենտրոնական խոշոր քաղաքներից՝ փոստով, որինակի համար՝ Մուկովալից: Յեթե նրանք պահպեն սառը տեղ չեն կորցնի իրենց ուժը՝ մինչեւ յերկու ամիս (ըստ ուրիշ հեղինակների մինչեւ 22 որ):

Վերոնիշյալ ազյուտակներից պարզ ե, վոր խումբը վորոշելու համար բավական ե ունենալ միմիան

2-րդ և 3-րդ խմբերի ստանդարտ շիճուկները, վորովհետեւ 1-ին խմբի արյունը և վոչ մի շիճուկից չե փոփոխվում, իսկ 4-րդ խմբի արյունը փոփոխվում ե բոլոր մյուս խմբերի շիճուկների ներգործությունից ենքաղակալին սեալցիսալի վորոշման տիրնիկան չափազանց պարզ ե, առակա տակի կաթեցնում են ստանդարտ շիճուկից մեկական խոշոր կաթիլ (ձախ կողմում 2-րդ շիճուկից, իսկ աջ կողմում 3-րդից). Դրանից հետո ծակում են (հատուկ գործիքով) պացիկնատի մատը և ստանդարտ անհրաժեշտ քանակությամբ արյուն՝ ներս քաշելով այն պիտիտի մեջ (առակա չափազանց բարակ խողովակ), այդ արյունը միքանի անգամ (5—10) լուծում են աղաջրի մեջ (Փիղիուրգիկ լուծույթ) և հետո այդ լուծույթից կաթեցնում են վերոնիշյալ ստանդարտ շիճուկների կաթիների վրա, ապակյա տախտակիները չտփազանց զգուշ շարժելով այս ու այն կողմնա աշխատում են յերկու կաթիներից ստանալ մի միատարր խառնուրդ և յեթե յերկու բոպելում այդ կաթիլի մեջ հատիկներ չառաջանան (չօրինակություն), այն ժամանակ առանց վախենալու կարելի է այդ արյունը փոխներարկել:

2. Ռեակցիայի յերկրորդ ձեր, վոր առաջարկել ե վինցենտը. կատարում ե հետևյալ կերպ—

Դոնորի և ուղարկինատի արմունկալին վենաներից վերցնում են 3—5 հատ, սահման, արյուն, Յերկու ապակյա պլուքիրկաների մեջ զոնորի և ուղցիպինատի արյան ալդ մասերը մոտավորապես մի ժամվա ընթացքում մակարդգում են, վորից հետո մակարդը նստում է պրոբիրկալի հատակին, իսկ շիճուկը հավաքվում ե



նրա վերել. այժմ խառնում են գոնորի շիճուկը ռեցիպիենտի երիտրոցիաների հետ և ընդհակառուկը ռեցիպիենտ շիճուկը դոնորի երիտրոցիաների հետ (խաչաձե ռեակցիա) և թեթե իրկու դեպքումն ել ազլուտինացիա չստացվի, այսինքն յեթե այդ խառնուրդների մեջ հատիկներ չերեվան, այն ժամանակ դոնորը և ռեցիպիենտը պատկանում են միենույն խմբին և արյան փոխներարկում կարելի յե կատարել:

Բայց ախտեղ մենք հանդիպում ենք ևս մի նոր խոչնորակի:

Բանը նրանումն ե, վոր արյան անոթներից դուրս արյունը ցրտի ազգեցությունից, մթնոլորտի ճնշման փոփոխությունից, ապակյա անոթների հետ շփվելուց և ալյն արագործն մակարդվում ե, իսկ մեզ հարկավոր ե, վոր արյան փոխներարկման ընթացքում նա չմակարդվի և չխցանի շպրիցի բերանը, վորովհետեւ ալյ խցանումը կխափանի շպրիցի խողովակը և մենք անկարող կլինենք արյունը դուրս քաշել կամ թե նրան ներարկել: Այդ անախորժ հանգամանքի դեմ մաքառելու նպատակով կուալլ, կիմպառնը և շատ ուրիշներն առաջարկել են բոլոր գործածվելիք ապահանակ անոթները նախապես ծածկել պարաֆինի բարակ շերտով, վորովհետեւ պարափինը խանգարում և դանդաղեցնում ե արյան մակարդումը:

Մուս կողմից Ուստինը, կինսոնը և Եյզոսը համարյա միաժամանակ առաջարկել են աքւան փոխներարկման ընթացքում ողտպել կիտրոն-թթվուտային նատրիոնի 4%՝անոց լուծույթով:

Թեթե նախքան արյուն փոխներարկելը, մենք

լվանանք մեր բոլոր անհրաժեշտ գործիքներն այդ ուժույթով, իսկ ներարկվելք արյան հետ վորոշքանակությամբ խպանենք նույն լուծույթը, այդ դեպքում արյան մակարդումը բավականին կուշանաւ:

Այժմ բոլոր դժվարությունները հաղթահարված են և մենք հանգիստ սրատով կարող ենք արյունը փոխներարկել: Արյան փոխներարկման ձեերը բազմաթիվ են, բայց մենք կնկարագրենք ամենատարածվածները:

1. Արյան ուղղակի փոխալեցումն՝ ըստ Ելեկերի:

Տեխնիկան չափազանց պարզ ե՝ դոնորի և ուղեղիենութիւնութիւն արմունկային վենաները միացվում են միմյանց հետ հատուկ ծորակով (կրառ). այդ ծորակն ունի յերկու անցք: Դոնորի արյունից վորոշ քանակություն քաշում են շպրիցի մեջ, վորից հետո փոխելով ծորակի անցքը, ներարկում են շպրիցի արյունը ուղեղալիենութիւնան: Այժմ ծորակին հաղորդում ենք առաջվա ուղղությունը և ոտանալով ոգնականից մի ուրիշ, նույն տեսակի և աղալուծույթով լի շպրից, լվանում ենք ամբողջ սիստեմն ալյ լուծույթով, վորից հետո գոնորից ելի արյուն ենք քաշում և ելի փոխելով ծորակի ուղղությունը, նորից ներարկում ենք այն ուղեղալիենութիւնին և ախտեալ շարունակում ենք մինչև կներարկվի բավարար քանակությամբ արյուն:

2. Արյան անուղղակի փոխներարկում (ցիտրատձեվ):

Նախապես մի հատուկ ապակյա անոթի մեջ լըցնում են 4%՝անոց կիտրոն-թթվուտային նատրիոնի լուծույթն ալյալիսի քանակությամբ, վոր ներարկվելք արյան 100,0 համապատասխանի ալյ լուծույթի 5,0:

Անոթը ղետեղում են մի ուրիշ ավելի խոշոր և  
37—40<sup>0</sup> ջրով լցրած անոթի մէջ. Այժմ գոնորի վե-  
նալից հաստ ասեղի միջոցով՝ արյանը դուբս են թա-  
փում առաջին անոթի մէջ՝ փոխներպրկման համար  
անհրաժեշտ քանակությամբ արյուն, վորն ապակչա-  
ձողով ողնականն անհնդատ խառնում ե: Այնուհետև  
դուբս են հանում ասեղը դոնորի վենայից և մի ուրիշ  
ասեղ ներս են մտցնում ուցիպիենտի վենայի մէջ և  
միացնելով ասեղը ուետին խողովակի միջոցով արյուն  
պարունակող անոթի հետ, ներարկում են արյունը  
ուցիպիենտի վենան:

Ի հարկե՛ չմոռանանք հիշեցնելու, վոր այս բոլոր  
գործողությունները պիտի կատարվեն ծայրագույն  
ասեպտիկայի որինքների համաձայն, բժշկի և նրա  
ողնականի ձեռքիրը մաքուր լվացած և բոլոր գոր-  
ծիքներն ու փաթաթանները ստեղծած:

Արյան փոխներարկումը ներկայումս՝ բժշկան  
ամենաարժեքավոր և անհրաժեշտ ձեերից մեկն ե:

Խոշոր կիմիկաններում, թե արտասահմանում և թե  
մեզ մոտ, նա անզնահատելի ծառայություն և մտտու-  
ցում: Պատերազմի ժամանակ, շնորհիվ նրա ծայրա-  
տիճանի պարզ տեխնիկայի, անկասկած, իբրև ռազմա-  
դաշտալին վիրաբուժության ամենազլիսավոր ձեերից  
մեկը, խոշորագույն գեր ունի խալալու. այդ տեսա-  
կետից մեր յերիտասարդ բժիշկներն անպայմանորեն  
պետք ե վոր ամենայն մանրամասնությամբ ծանոթա-  
նան արյան փոխներարկման տեխնիկայի հետ:

Այդ հարցը չափազանց ակտուալ ե և աչքաթող  
անել չի կարելի:

Ապագա պատերազմներն իրենց անորինակ դա-

մահությամբ անթիվ ու անհամար զոհեր պիտի առ-  
նեն վոչ միայն անմիջապես կավող զինվորներից, այլև  
թիկունքում գտնվող մարդկային զանգվածներից:  
Այժմ թիկունքը մի գուցե ավելի կլինի վտանգված,  
թե սահմանամերձ վայրերը և թշնամին իր զիմա-  
քան թե սահմանամերձ վայրերը և թիւնամին իր զիմա-  
քոր հարգածներն անպայմանորեն կուղի և թիւնանքի  
վրա՝ զինամթերման անհրաժեշտ գործը խանգարելու  
նպատակով. այս անգամ արդեն, այսպիս կոչված ոչե-  
զաքները՝ պատերազմի արհավիրքները հեռվից դիտե-  
լու հսարավորությունից պիտի զրկվեն, ինչ-  
պիս և ճակատում մարտնչողներից պիտի պահանջվի  
հավասար մասնակցություն, լինի դա վենքը ձեռքին,  
լինի դա այլ կերպ՝ «ամեն ինչ և ամեն վոք խսպաս  
պիսի դա այլ կերպ՝ «ամեն ինչ և ամեն վոք խսպաս  
պատերազմի լինիվ հաջուղության». ահա այս ե լինե-  
լու գալիք պատերազմների ընդհանուր լոգունգը:

Այդ բոլորը ևս առավել վերաբերվում ե նաև  
բժիշկներին և այդ և պատճառը, վոր պատերազմի ժա-  
մանակ բժիշկներից, թե ուսպնի դաշտերում և թե  
թիկունքում, ամենուրեք պահանջվելու յի պարտա-  
կանությունների բարձրագույն գիտակցություն, ու-  
ժերի ծայր աստիճան լարվածություն և զրա հետ մի-  
ասին գիտական լայն պարտականություն ռազմակաշ-  
տավին խիրուրգիալից, վորովհետև արյան ներարկումը  
ներկայիս ռազմակաշտալին խիրուրգիալի ամենա-  
գլխավոր միջոցներից մեկն ե. այդ պատճառով ել մեզ  
անհրաժեշտ և վազորոք հաշվի առնել և լուրջ ու-  
սումնասիրության նլութ դարձնել խիրուրգիական ոգ-  
նության ալդ նորագույն ձեւը:

Ներկայումս արյան փոխներարկումն անցյալի ան-  
հասանելի բարձունքներից արդեն իջել ե, դասնալով

բուժման առորյա և ամենահասարակ ձևերից մեկը, բայց մեզ մոտ, Խորհրդավիճն Հայաստանում, նրա տարածվելուն չափաղանց խանգարում և մեր լերիտասարդության ավելի քան «զգույշ» վերաբերմունքը դեպի բժշկական այդ նոր ձևը. նա կարծես թե միաւ տեսակ վախ և զգում կարծելով, վոր այդ նոր մեթոդն իր մեջ պահում և դադանի կերպով դեռ մեզ համար ըոլորովին անհայտ վտանգներ:

Այդ տեսակեանից մենք պետք եւ որինակ վերցնենք Յելլովայից և մանավանդ Հյուսիսային Ամերիկալից:

Հոգաշխարհային պատերազմի ժամանակ արյան փոխներարկումը լայն մասշտաբով կիրառվում էր նախ անտանտի բանակներում, իսկ հետագայում նրանցից որինակ վերցրին և գերմանական խիրուրգները:

Այս փոխներարկումը գործադրության մեջ էր վոչ միայն թիկունքի լազարեթներում, իսկ խոշոր հիվանդանոցներում, այլ և ուղմագործերում: Ամերիկացիներն այդ հարցում առաջնակարգ տեղ եյին բըռնում. նրանք արյունը ուղմանակատ ելին ուղարկում նախապես նրա խմբակալին Ն.-ը վորոշած, հերմետիկ կերպով ծածկված անոթների մեջ և դրա հետ միասին բոլոր սահմանամերձ վայրերում ունեյին ստիպողական կարգով նշանակված դոնորների հատուկ ջոկատներ: Անտանտի բանակներում ամեն մի դինվորի խմբակալին Ն.-ը վաղորոք վորոշված եր և նշած՝ զինվորի անձնական գրքույկում: Ամերիկական համալսարաններում բժշկական ֆակուլտետների ուսանողները չափաղանց խոշոր դեր ելին խաղում արյան փոխներարկաման հարցի ժողովրդականացման գործում, անձնա

կան որինակով ցույց տալով ազգաբնակչությանը, վոր դոնորը վոչ մի վտանգի չել յենթարկվում և այդ նոր ձևի «արևեստը» չափաղանց շահավետ եր:

Այնուհետև ամերիկական բանակները չափաղանց լայն մասշտաբով ոգտված ելին հմուտ և արյան փոխներարկման տեխնիկային տիրապետած խիրուրգների խոշոր աշխատակիցներով. այդ հանգամանքը չափաղանց մեծ ծառալություն մատուցեց ամերիկական բանակին և առիթ տվեց բազմաթիվ վիրավորների անխուսափելի մահվանից գրկելու:

Ներկայումս Միացյալ Նահանգներում արյան փոխներարկումով ոգտվում են չափաղանց լայն չափերով և բազմաթիվ խոշոր ու անգամ մանը քաղաքներում գոյություն ունեն գոնորների ահազին խմբեր. այդ գոնորներն այնքան շատ են, վար ունեն իրենց առանձին ցեխներն ու պրոֆեկտակերպությունները, վորոնք խիստ շահագրկոված են, վորպեսզի իրենց միության անդամների թիւը վորոշ սահմաններից չքարձրանա: Որինակի համար՝ Մայո՛լի կլինիկան ունի իր տրամադրության տակ դոնորների ահազին թիվ, մոտավորապես հազար հոգուց բաղկացած. դոնորները պարբերաբար յենթարկվում են բժշկական քննության, վասերմանի ռեակցիան պարզելու համար, արդյոք վասերմանի ռեակցիան վարդելու համար, հատկապես կովիզել այս կամ այն դոնորի խմբակային հատկությունները: Դոնորները գտնվում են խիստ հսկողության տակ և անբարոյական կյանք վարողներն անմիջապես հեռացգում են միությունից: Դոնորների նորության պայմանները հյուսիսային Ամերիկայում անքան լավ ե, վոր ամերիկական մի բժշկական ամսաթերթի կողմից առաջարկություն կա չափաղանց

Երիտասարդներին դոնորների միության մեջ չ'ըն-  
դունել, վրովինետև նրանք այսպես չափազանց թեթև  
կերպով աշխատած դրամները կարող են ծախսել  
«վորոշ, վոչ ռացիոնալ» կարիքների համար:

Մեզ մոտ - Խորհրդային Միության սահմաններում  
վարձատրման ձերն այլ են. դոնորները պահվում են  
ինաշխիվ պետության. արյան վորոշ քանակությունը  
վաղորոք գնահատված և և արյունը վերցնելուց հետո  
դոնորը ստանում է միանվագ գրամական վարձատրու-  
թյուն, ուժեղ սնունդ, կուրորտային պայմաններ և  
ալլն:

Դրամական վարձատրությունը վորոշված է 20-ա-  
կան սուբքի ամեն 100 խոր. սահմանական 80—  
150 ռ. աման մի ոպերացիալի համար:

Ներկայումս մի անգամ ընդմիջությունը վորոշված է, վա-  
կատարելապես առաջը յեվ յերիտասարդ մարդիկ կարող  
են փոխներարկման նպատակով տրամադրել իրենց արյան  
փորոշ մասը (մոտավորապես 1000,0) առանց փորեվի  
վաճառքի:

Ներկայումս շատ հեղինակավոր անձանց կողմից  
առաջարկված ե գոնորների հարցը ստիպողական դարձ-  
նել, ինարկե, ալստեղ ահազին նշանակություն ունի  
ընկերական որինակը և հորդորը: Այս բոլոր չափա-  
ղանց լուրջ հանգամանքները, յես կարծում եմ, մեր  
յերիտասարդությունը հաշվի կառնի՝ ցուց տալով  
լուրջ վերաբերմունք արյան փոխներարկման հարցին.  
Նա զարկ կատ և կտարածի գոնորների հարցը իշահ  
մեր բանվոր և աշխատավոր մասսաների: Դոնորները  
կարող են լինել թե տղամարդիկ և թե կանայք,

Արյան փոխներարկումը գործ է ածվում հետեւալ

հիվանդությունների գեմ:

1. Արյան սուր պակասության ժամանակ, ովհա-  
վորապես պատերազմի ընթացքում, իերք վիրավոր-  
վում են արյան խոշոր անոթներ և տուաջանում ե  
ուժեղ արլունահոսություն: Այսուհետև գործ է ածվում  
ծանր ոպերացիաներից հետո, կանանց արդանդալին  
արյունահոսությունների ժամանակ, ստամոքսի կլոր  
խոցից առաջացած արյունահոսության զեղքում և  
այլն:

Համաշխարհալին պատերազմի ժոմանակ յերկոպա-  
կան պետությունները, գլխավորապես Անտանտը, լայն  
չափերով ողավել են արյան փոխներարկումով և սոտ-  
ցել են մեծ հաջողություն, այդ ձեմք բժշկումով ֆրան-  
սիացիներին հաջողվել ե ֆրկել բազմաթիվ վիրավորներ  
անխուսափելի մահից: Ուժեղ արյունահոսությունից  
զլսավորապես առաջանում է ուղեղի արյան սուր  
պակասություն և դրա հետ միասին կյանքի զլսավոր  
կենորոնների շնչառության և սրտի գործունելության  
պարալիչ: Վոգանն ու Յուղերհակեն առաջարկում են  
արյան փոխներարկումը մինչև անգամ, իերք շնչառու-  
թյունն արդին կանգ և առել:

«Այդ ոպերացիան զարմանալի հատկություն ունի:  
Նրանով մենք մենադու որդանիքմը շատ և շատ գեղշ-  
քերում բոլորովին կենդանացնում ենք» ասում ե  
կենենք, կենենք շատ և աշխատել հույն-տաճկական  
սպատերազմի ժամանակ (1912թ.) և ունի այդ հարցի  
վիրաբերմամբ մեծ հմտություն: Նա զրում է, վոր  
ուժեղ արհունահոսության 68 ծանր զեղքերից արյան  
փոխներարկումով նրան հաջողվել ե ֆրկել 40 հոգու:

Ժանբրոն իմպերիալիստական պատերազմի ըն-

թացքում կատարել ե բազմաթիվ արյան փոխներարկում և փրկել շատ և շատ ծանր վիրավորներ:

Յուղերհակեն ասում ե. «Արյան փոխներարկումը սրաի գործունելության վրա ազդում ե չափազանց ուժեղ և հեֆքեկտիվ կերպով: Բոլորովին գունատ և կապտած, անգամ արդեն հոգեվարքի մեջ գտնվող վիավորներն անմիջապես, կամ մի քանի բոլորի կազմությում են, զարկերակը լցում ե և կանոնավորվում. մինչ այդ անխուսափելի մահվան մտանված վերավորներն արյան փոխներարկումից հետո բոլորովին վերականգնում են իրենց ուժերը և առողջանում ծանր վերքերից: Հիվանդի անտարբերությունը չքանում ե, շնչառությունը դառնում ե կանոնավոր, գունատ դեմքից վախի արտահայտությունը բոլորովին չքանում ե, մենք ստանում ենք այն տպավորությունը, վոր արյան փոխներարկումը սրտի գործունելությունը վերականգնող միջոցներից ամենաուժեղն ե. — վոչ կամֆորան, վոչ կոֆեինը, վոչ գիգալինը, վոչ սորոֆանտինը և վոչ ել աղալուծութը, դրանցից և վոչ մեկը չի կարող փոխարինել արյան փոխներարկան»: Բայց արյան սուր պակասությունների և շոկի (յերկարածիք ուղեղի ու փլեկառը պարալիչ) ժամանակ, վարդ գեղքերն են պահանջում արյան փոխներարկում. այդ հարցը պատերազմի դաշտում շատ հաճախ կարող ե տատանումների և կասկածների առիթ ծառայել: Յերբ արյան ճնշումը արագարար իջնելով հասնում ե 60 ստ. տատանում և այսպես կոչված «hypotension décompensée» այդպիսի գեղքերում անհրաժեշտ ե անմիջապես դիմել արյան փոխներարկան: Բայտ Դեպաժի, յեթե վիրավորի վիճային արյան մեջ առաջի յերեք ժամվա-

ընթացքում երիտրոցիտների քանակը պակասում ե 4 ½ միլիոնից, իսկ 3—5 ժամից հետո իջնում ե 4 միլիոնի և 9 ժամից 3—½ միլիոնի, առանց հետաձգելու պետք ե ձեռնարկել արյան փոխներարկման, հակառակ գեղքում մահն անխուսափելի լի: «Յեթե դրությունը անորոշ ե, ավելի լավ է փոխներարկել, քան թե սպասել՝ կորցնելով թանկագին ըուպենսիրը», ասում Weil-ը:

Այնուհետև արյան փոխներարկումը շատ անգամ անգնահատելի ծառացություն ե մատուցում և ուրիշ գեղքերում. որինակ՝ յեթե վիրավորը կարիք ունի լուրջ և ծանր ոպերացիայի, բայց նա արդեն բավականին արյուն ե կորցրել և շոկի մեջ ե գտնվում, այդպիսի գեղքերում, նախքան ոպերացիան, արյան փոխներարկում շատ անգամ վրկարար դեր ե խաղում. հակառակ գեղքում, այսինքն՝ առանց արյան նախապես փոխներարկման, ոպերացիան համարյա թե միշտ մատնվում ե անհաջողության և վիրավորը մեռնում ե:

«Փոխներարկած արյան ներդրծությունը յիշեան ե գալիս հենց նույն ոպերացիոն սեղանի վրա», ասում ե պրոֆ. Զարլուդովսկին. — «Իվանդի մեռելալին գեմքը դառնում ե վարդագույն, մարած աչքերը նորից սկըսում են փայլել, շնչառությունը դառնում ե խորը, թելանման պուլսը լցում ե և նորից շոշափվում, արյան հեծողլորինի քանակն արագորեն ավելանում ե 20—25%՝ ից կարող ե բարձրանալ մինչև 50—60%, և ել ավելին»:

2. Հեմոփիլիայի դեմ. (հեմոֆիլիկները յենթակային հաճախակի և ուժեղ արյունահոսությունների՝

քթից, անգամ ամենաչնչին վերքից, վորովհետևնը արլան մակարդման ուժը շատ թույլ է լինում. այդ հիվանդությունը ժառանգական է). փոխներարկումից հետո Փիլիպի արլունահոսությունը իսպառ դադարում է:

3. Դեղնախտից հիվանդի արլան մակարդման ուժը կարող է նմանապես սաստիկ թուլանալ. նա համարյա թե միշտ, իբրև հիվանդագին յերևույթ, ուղեկից և լեղապարկի բորբոքման, այնպես վոր, լեղապարկը լարդից հեռացնելու ժամանակ լեղապարկի մնացորդներից և առհասարակ շրջակա հյուսվածքներից հաճախ առաջանում են ծանր և անզամ մահացու արլունահոսություններ. այսպիսի գնապքերում արլան փոխներարկումը շատ և շատ անգամ փրկարար դեր է խաղում:

4. Արլան փոխներարկումը վոչ միայն լավագույն միջոց և արյունահոսությունների դեմ, այլև զանազան հեղձուցիչ գաղերի: Ներկայումս հեղձուցիչ գաղերը գրավում են աշխարհիս բոլոր պետությունների ուշադրությունը՝ իբրև հարձակման և ինքնապաշտպանության ուղարկան ուժեղ գործոններից մեկը: Համենայն գեպս Փոսկենից, դիֆոսենից, իպրիտից առաջացած որգանիզմի ընդհանուր թունավորման գեպքերում արլան փոխներարկումը պայքարի ահենալավագույն ձևերից մեկն է: Ուրիշ գաղերի վերաբերմամբ հարցը դեռ պերզ չե:

Փոխներարկում են սովորաբար 500 խ. սմ. վորոշ գեպքերում արդ քանակը կարելի է պակասացնել (շոկ առանց արյունահոսության) կամ ավելացնել (արլան սուր պակասության ծանր գեպքերի և շոկի):

Համաշխարհային պատերազմի վիճակագրական տվյալներից յերեսում ե, վոր արյան փոխներարկումը չափազանց մեծ ծառաչություն և մատուցել ուժեղ արլունահոսությունների և շոկի դեմ՝ վորպես պարքարի լավագույն միջոց. արլան փոխներարկումը շահկից և ծանր արլունահոսություններից հաջողվել է վրկել հիվանդների, ըստ Robertson-ի՝  $60\%$ -ը, ըստ Halvareou-ի՝  $62$ ,  $50\%$ -ը, ըստ Tuffier-ի՝  $63\%$ -ը Savaerts-ի՝  $75\%$ -ը, Pieque-ի՝  $63,80\%$ -ը, և Jeanbrau-ի՝  $67\%$ -ը (Pauchet): Եթե վերցնենք այդ թվերի միջինը, կտեսնենք, վոր արյան փոխներարկումը խոշոր դեր ունի խաղալու ապագա համաշխարհային պատերազմների ընթացքում:

Ներկայումս արդեն ապացուցված փաստ է, վոր արլան փոխներարկումը լավագույն միջոցն է զանազան քրոնիկ թունավորությունների դեմ պայքարելու գործում: Թե արտասահմանում և թե մեզ մոտ, արդյունաբերական վայրերում, բանվորները շարունակ գործ ունեն հեղձուցիչ և թունավոր գաղերի, ինչպես և ուրիշ բաղադրությունների հետ, (որ գառիկի, տոլուիլենուլիսամինի, ֆենիլիդուրազինի, բենզոլի, արճճի և ալլն), զրանից առաջ և գալիս բանվորների խրոնիկական թունավորում և հեմոռագիկ դիատեզ՝ իբրև թունավորման հետևանք: Հեմոռագիկ դիատեզից զըլ-խովորապես առաջանում է մարմնի զանազան հուսվածքների և անօթային սիստեմի պատերի քայլքայումը. որինակ՝ լնգերի քայլքայում և աստմերի վուզաթամ փշացում, քթի հաճախակի արյունահոսություններ, արգանդի, յինթամուշկի մկանալին արյունահոսություններ և ալլն:

Վորոշ դեպքերում կարող են պատահել և սուր թունավորութիւնը՝ որինակ՝ զառկաթթվային ջրածնից (Мышьяковистый, водород), լուսավորող գազից (Светильный газ), ածխաթթվուտից, նիտրոռուլիցերենից և այլն. նախքան արյուն ներարկելը առաջարկվում է հիվանդի ներակից վորոշ քանակությամբ արյուն բաց թողնել (մոտավորապես 700—800 լի. սոմ.), վորպեսդի նրա սիստեմում յեղած թուլնի քանակը պակասի և ներարկման հետեւանքները լինեն ավելի եղֆեկտիվ:

Գրոֆեսիոնալ թունավորութիւնների ներկարատես աղցեցությունը չափազանց վտանգավոր և բանվորի համար և այդ հարցի լայն ուսումնասիրությունը մեր իրականության մեջ ծալը աստիճան ակտուալ պետք ե համարել: Վլագոսը և նրա ոգնականները արյան փոխներարկման ինստիտուտում կատարել են բազմաթիվ ուսումնասիրություններ և ապացուցել վոր արյան փոխներարկումը չափազանց փրկարար ազգեցություն ունեն արդյունաբերական վայրերում խրոնիկ թունավորված բանվորների վրա:

Արյան փոխներարկումը ահագին նշանակություն ունի նաև վարակիչ հիվանդությունների դեմ՝ վարպես լավագուցված և, վոր քութեց, դիֆտիրիտ, սեպսիտ (նեխարյունությունը) հիվանդությունների ժամանակ արյան փոխներարկումն անմիջապես վերացնում է վարակի ներգործությունը որդանիզմի վրա՝ ստեղծելով վերջինիս համար պայքարի ավելի նպաստավոր պայմաններ: Նույնը վերաբերվում է և մալարիային, նամանավանդ նրա ծանր քրոնիկ տեսակներին, վորոնք չեն լինթարկվում խինինի ազգեցությանը:

Տիֆ հիվանդության բազմաթիվ դեպքերում, ըստ Դանի, յեթի տիֆով հիվանդացածների արյունը փոխներարկենք, կատանանք արորատիվ հետեւանքներ՝ ջերմատիճունի իջեցում, տոքսիկ յերեսւթյունների վերացում և այլն: Բծավոր տիֆի ժամանակ փոխներակումն ինչքան շուտ կատարվի, այնքան լով հետեւանքներ կստացվի:

Հատ Ross-ի և Ասոճ-ի կարմիր քամու և զրիպպ հիվանդության վարակը արյան փոխներարկումից արագորեն կորցնում է իր ներգործում ուժը որպահիզմի վրա և մահացությունն իջեցնում է 50%:

Տիֆ համաձարատկի դեմ պայքարելու նպատակով առաջարկված է տիֆով հիվանդացածների արյան սորոֆիլակտիկ մասսաբական փոխներարկումն առողջներին: Այս դեպքում առողջները սպանում են իմմունիտը և հիվանդանալու դեպքում հեշտությամբ են դիմանում վարակին:

Արյան փոխներարկումը գործ է ածկում և բազմաթիվ ուրիշ հիվանդությունների գեմ: Նա ամենուրեք ընդունված է իրեն ըուժման չտիպանց ոգտագիտ և անգնահատելի միջոց:

Վերջին ժամանակներս արդեն գիտականորեն և փորձնակետ ապացուցված ե, վոր արյունը կարելի է փոխներարկել նաև թարմ դիակից՝ մանվանից վոչ ուշ քան վեց ժամից հետո: Ստացած արդյունքները չափազանց միիթարական են:

Նման փորձեր կատարվում են և Մոսկվայի Սկլիֆասովսկու անվան հիվանդանոցում: Արոֆ: Յուղինը մի քանի-անգամ հիվանդներին դիակի արյուն և ներարկել, մինչև անգամ մահվանից 10—12 ժամ հետո

և ստացել ե ղարմանալի հաջող հետևանքներ:

Զեխու-Սլավիակիայում բժ. Սակայանը նմանապես դիմակների արյան ներարկումից ստացել ե բազմաթիվ դեպքերում չափազանց բավարար արդյունքներ: Նույնը կատարվում է ավելի մեծ մասշտաբով և Մոսկվայի արյան փոխներարկման ինստիտուտում:

Վերջին ժամանակները Փարիզում պրոֆ. Բյուսկենը կատարում է ճագարների վրա զարմանալի փորձեր՝ արյան փոխներարկումով «յերիտասարդացման» հարցը պարզելու նպատակով:

Հերավի՛ արյան փոխներարկումով մի գուցե հնարավոր լինի կինդանացնել մարող կլանքը, ուժ և կինդանություն ներշնչել նրան: Այս հարցը մեծ անակընկալների հետ և կապված: որինակ՝ յերեվակայիք մի զառամյալ և հանճարեղ ծերունու, վորն անցյալում բազմաթիվ ծառայություններ և մատուցել մարդկությանը, արյան փոխներարկումով մի գուցե այլպիսի ծերունուն կարելի լինի «յերիտասարդացմանեւ», վերդարձներով նրան աշխատունակություն, շարունակելու իր բեղմանավոր ուսումնասիրությունները հանուն մարդկության շահների:

Բայց մենք կարող ենք արյունը փոխներարկել հակառակ ուղղությամբ, ալսինքն ծերունիներից թոքախտով հիվանդներին: Թոքախտն, ինչպես հայոնի լի, յերիտասարդների հիվանդություն և, իսկ ծերունիները այդ վարակով առանասարակ չեն հիվանդանում: ալսպես վոր, վերջիններիս արյունը սրսկելով հիվանդ յերիտասարդին, մի գուցե մարդկային ալդ գաֆան չարիքի դեմ ոլայքարն ավելի արդյունավետ զարձնենք:

Մոսկվայում ներկայութեա հաստատված ե և աշխատում ե արյան փոխներարկման Գիտական Ինստիտուտ: Բոլոր Խորհրդային հանրապետությունների խոշոր քաղաքները կապված են այդ կենտրոնի հետ՝ իրեն նրա Փիլիալ հաստատություններ: Արանք կենտրոնի հետ միասին և նրա աջակցությամբ արդեն կատարել են մոտ 5000 արյան անուղղակի փոխներարկում: Այդպիսի մի Փիլիալ հաստատություն գոյություն ունի նաև Յերևանում, բայց աշխատանքները այստեղ գտնվում են դեռ սաղմնային դրության մեջ՝ շնորհիվ դժունների բացակայության:

Դոնորների հարցը մեղ մոտ պետք ե գրվի չափազանց լուրջ հողի վրա, անհրաժեշտ ե ուժեղ և սիստեմատիկ աշխատանք կամավոր գոնորներ գտնելու համար: «ԵԵՎ ՎՈԶ ՄԻ ՔԱՂԱՔԱԾԻՒ ԱՌԱՆՑ ԱՐՅԱՆ ՇԻՃՌԻԿԻ ԱՆՑԱԳԻՒՆ: ահա ինչ լոգունգ և առաջարել Մոսկվայի ինստիտուտը կոմյերիտականներին, բռնհերի ուսանողության և կարմիր բանակայիններին:

Մեր Խորհրդավին Միության և ապօգա պրոֆեսիոնալ գոնորների կազմերի պատրաստման գործում սրանք են, վոր պետք ե ցուց տան ամենաակտիվ և լեռանդուն մասնակցություն:

Վերջացմանելով խոսքս, լիս ինձ բավարարված կհամարեա, յեթե ինձ հաջողվեր համոզել մեր կոմիերիտականներին, Փիզիկուլտուրնիկներին և ուսանողներին՝ զարկ տալ մեղ մոտ ևս արյան փոխներարկման հարցին: Հարկավոր ե միահամուռ ուժերով բուժման այդ շատ կարեոր Փակտորը հանել իր անշարժ և քարացած դրությունից և զնել իր բարձրության վրա:



ՀՀ Ազգային գրադարան



NL0271370

4389

ФЕВРЬ 50 Ч.

Проф. А. Г. Мирза-Авагян  
**Переливание крови**  
Гиз ССРА, Эривань, 1984